Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՆՎՈՐԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՄԻ

331.98
Ա 455

ՎՅՈՒԳՈ - ՍԱՐՅԱՆ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

Պետական հրատարակչություն.—Երևան, 1930

Հր. № 1369։ Գրառեպվար № 5488 (բ)։ Տիրաժ 3000

Գեոհրատի առաջին տպարան Վաղարշապատում։
Գտավեր № 117։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՅԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

«Պետք է ավելի ու ավելի լայնացնել աշխատավորության մասնակցությունը տնտեսության ղեկավարման և նոր արտադրության կառուցման աշխատանքներում։

Եթե մենք չլուծենք այդ խնդիրը, եթե մենք պրոֆեսիոնալ միությունները չվերածենք այնպիսի մարմինների, որ նրանք՝ պետության անմիջական կառավարման մասնակցելու համար տասնապատիկ ավելի լայն մասսաների դաստիարակման քան հիմա, ապա մենք չենք կարող մինչև վերջը հասցնել կոմունիստական շինարարության գործը»։

(Լենին, Պրոֆմիությունների մասին)։

Մասսայական տնտեսական աշխատանքները պրոֆմիություններում որքստորե գրավում են առաջնակարգ տեղ, և այլ կերպ էլ լինել չի կարող, քանի որ սոցիալիստական յերկրի ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական նախապայմաններից մեկը դա բանվոր դասակարգի բովանդակ մասսայի մասնակցությունն է մեր տնտեսության առորյա ու պրակտիկ խնդիրների լուծման գործին։

Պրոֆեսիոնալ կազմակերպությունները բանվորական մասսաների իրական մասնակցությունը առորյա խնդիրների լուծման գործում ապահովում են արտադրական խորհրդակցությունների միջոցով։

Արտադրական խորհրդակցությունները հանդիսանալով միությունների տնտեսական աշխատանքների մասսայական մեթոդը, ներկայիս իրենց վրա յեն բևեռում վողջ բանվոր դասակարգի ուշադրությունը. և հիրավի Արհմիությունների դերն ու խնդիրները, սոցիալիստական տնտեսության ռեկոնստրուկտիվ շրջանում, վորպես կոմունիզմի դպրոցի, վորպես բանվոր դասակարգի ամենալայն խավերը մեր տնտեսության գործնական, հրատապ և առորյա կյանքին վերաբերվող խնդիրների լուծման մասնակից անելու, ապա ուրեմն մասնակից անելու նաև ղեկավարման գործին, լուծվում է արտադրական խորհրդակցությունների միջոցով։

Արհմիությունների մասսայական տնտեսական աշխատանքների հիմնական խնդիրներն են՝

1) Բանվորական ամենալայն խավերի դաստիարակումը արտադրության ղեկավարման գործի համար։

2) Բանվորների ստեղծագործական և արտադրական հարուստ փորձի ոգտագործումը տնտե-

սության լավացման և զարգացման ուղղությամբ։

3) Բանվորական ամենալայն խավերի ներգրավումը արտադրության խնդիրների լուծման գործին։

4) Բանվորական ամենալայն մասի հսկողության ուժեղացումը խորհրդային արդյունաբերության և ձեռնարկությունների ղեկավարման գործի վրա։

5) Բանվորական մասսաների առանձնապես յետամնաց և բանվոր դասակարգի նոր կադրերի դաստիարակումը։

Արտադրական խորհրդակցությունները իրենց գոյության ու աշխատանքի 6-7 տարվա ընթացքում, զարգացող սոցիալիստական տնտեսության գործում, ունել են խոշոր տնտեսական ու քաղաքական անջնջելի եֆեկտ, և չնայած անցած փառավոր ճանապարհին, այսոր նրանք մեր աշխատանքների սոցիալիստական տեմպերի շրջանում չափազանց յետ. են մնում արտադրության գործնական ու հրատապ խնդիրները ժամանակին լուծելու աշխատանքներից։

Նշանակում է արդյոք այս դրությունը, որ արտադրական խորհրդակցությունները, որպես մասսայական տնտեսական աշխատանքների մեթոդ, արդեն կորցրել են իրենց կենսական նշանակությունը, — բոլորովին վոչ. յեթե այսոր մաս-

սայական տնտեսական աշխատանքների հիմնական մեթոդն է համարվում սոցիալիստական մրցությունը և եթե այսոր սոց-մրցման ծավալման գործում արտադրական խորհրդակցությունները չեն կարողացել ցուցաբերել իրենց, այդ դեռ բավական չէ արտադրական խորհրդակցություններն անպետք համարելու և մասսայական տնտեսական աշխատանքների նոր ձև վորոնելու համար։

Արտադրական հանձնաժողովների և խորհրդակցությունների աշխատանքների ներկա շրջանի ամենահիմնական թերությունը պետք է համարել՝

1) վոր չեն կարողացել գլխավորել բանվորների ստեղծագործական ինքնագործունեությունը,

2) չափազանց հեռու են եղել սոց-մրցման գործի ծավալման խնդիրներից,

3) չեն ղեկավարել հարվածայնությունը,

4) չեն կարողացել մոբիլիզացիայի ենթարկել բանվորների կարծիքը 5-ամյակի 2-րդ տարվա արտադրական պլանների առաջադրանքների լրիվ կենսագործման վրա։

Այս պայմաններում է ահա, վոր հնարավոր է եղել մի շարք արտադրական ձեռնարկություններում առաջին կիսամյակում առաջացած արտադրական ճեղքվածքները և կիսամյակի պլան-

ների վերակային ու քանակային ցուցանիշների թերակատարումը։

Այս թերությունների արմատը պետք է փընտռել ոչ թե արտադրական խորհրդակցությունների, այլ այդ աշխատանքների կազմակերպման կարգի և նրա ղեկավարման ձևերի մեջ։

Կուսակցության կողմից առաջադրած և այսորվա մեր հիմնական անելիքների խոշորագույն խնդիրը կազմող «Ցերեսներս դեպի արտադրություն» լոզունգը առաջին հերթին պահանջում է բանվոր դասակարգի ամենամասսայական կազմակերպությունների աշխատանքների վերակառուցումը, և մինչ այն ժամանակ, երբ մենք իրականում չվերակառուցենք մեր աշխատանքների ձևերն ու մեթոդները, մեր աշխատանքների հիմնական թերությունների վերացման գործը հիմնականում ավարտած համարել չենք կարող։

Այս կապակցությամբ է, որ ներկայումս դրվում է արտադրական խորհրդակցությունների աշխատանքների վերակառուցման խնդիրը։ Հիմնականում վերակառուցման հիմքում դրվում է աշխատանքները դեպի արտադրական ատորին միավորները տապակենտրոնացնելու և այդ աշխատանքներում բանվորական ամենալայն խավերը ներգրավելու խնդիրները։

Արտադրական խորհրդակցությունների, ինչ-

պես նաև արհեստակցական միությունների վողջ աշխատանքները պետք է վերակառուցել հարվածային տեմպերով, վորպեսզի բանվոր դասակարգի ամենամասսայական կազմակերպության—պրոֆմիությունների—աշխատանքները յետ չմնան բանվոր դասակարգի ակտիվությունից այլ, կարողանան գլխավորել ու զարգացնել այն։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քանի վոր արտադրական խորհրդակցության հիմնական և գլխավոր աշխատանքը պետք է հանդիսանա սոց-մրցման և հարվածայնության ծավալման գործի ամենալայն ոժանդակությունը, այդ աշխատանքներին բանվորների ամենալայն խավերի ներգրավումը և այդ շարժման ղեկավարությունը, պարզ է, վոր տնտեսական աշխատանքների կենտրոնը պետք է փոխադրել ձեռնարկության սկզբնական արտադրական միավորները և ապա ստորին այս միավորների վրա կառուցել ու կազմակերպել վողջ ձեռնարկության աշխատանքները։

Արտադրական խորհրդակցությունները ձեռնարկություններում կազմակերպվում են ըստ առանձին հերթերի (ամենաների).—

1) Խմբակային, արտադրական բոլոր սկզբնական միավորումներում, վորոնք ընդգրկում են վոչ պակաս քան 10 հոգի և կատարում են արտադրական միացյալ ու միատեսակ պատվեր։

Նման խորհրդակցություններ պետք է կազմակերպել առանձին բրիգադաների, ագրեգատների, կոմպլեկտների, հալուցքի, առանձին բաժինների և ընդհանրապես բոլոր առանձին արտադրական միավորների կից։ Այս խորհրդակցությունների կազմակերպման հիմնական հատկանիշն է, վորը յերբեք չպետք է մոռացվի, դա նրանց (արտադրական սկզբնական միավորների) միացյալ աշխատանքը կատարելու և արտադրական ստորին միավոր լինելու խնդիրն է։

2) Առանձին արտադրական խորհրդակցություններ ըստ ցեխերի և առանձին հերթերի։

3) Բացի վերոհիշված խորհրդակցություններից, վողջ գործարանին կամամբ կազմակերպվում է համագործարանային արտադրական խորհրդակցություն։

Այն ժամանակ, յերբ համագործարանային և ցեխային արտադրական խորհրդակցությունները գումարվում են կարիքի դեպքում, քննություն առնելու ամբողջ գործարանի կամ ցեխի արտադրական կյանքին վերաբերվող խնդիրները, ապա խմբակային արտադրական խորհրդակ-

ցությունների զումարումը պետք է լինի ավելի հաճախ, վորտեղ քննության պետք է դրվեն տվյալ արտադրական խմբակի կյանքին վերաբերվող առանձին խնդիրները։

Մեր պայմաններում կան մի շարք ձեռնարկություններ, վորոնք իրենց փոքրության պատճառով առանձին ցեխերի չեն բաժանվում. այդ ձեռնարկություններում արտադրական խորհրդակցությունները պետք է կազմակերպել միմիայն խմբակային և համագործարանային։

Արտադրական խորհրդակցությունների աշխատանքները վերակառուցելուց հետո ևս բանվորների ուբանվորուհիների մասնակցությունն այդ աշխատանքներում կարող է և պետք է տեղի ունենա միմիայն և միմիայն կամավոր մասնակցության սկզբունքի հիման վրա։

Առանձին արտադրական խորհրդակցությունները պետք է այնպես կազմակերպեն իրենց աշխատանքները, վորպեսզի արտադրական տրվյալ միավորի շրջանում աշխատող բոլոր բանվորները ու բանվորուհիները մասնակցեն նրանց աշխատանքներին։ Այս խնդիրը յուրաքանչյուր արտադրական խորհրդակցություն փոքր ի շատ է բավարար կերպով կլուծի միմիայն այն դեպքում, յեթե նա իր աշխատանքները դարձնի հետաքրքիր և քննության դրվելիք խնդիրները՝ բովանդակալից։

Մեր կարծիքով անհրաժեշտ է որևնդրական կարգով պարտադիր դարձնել ադմինիստրատիվ-տեխնիկական պերսոնալին պատկանող ընկերների մասնակցությունն արտադրական խորհրդակցությունների աշխատանքներին. համապատասխան ցեխերում և արտադրական ստորին միավորներում աշխատող ինժեներներն ու տեխնիկները և ադմինիստրատիվ պերսոնալին պատկանող առանձին աշխատակիցները պետք է մասնակցեն համապատասխան արտադրական խորհրդակցությունների աշխատանքներին։

Այս մեթոդն անհրաժեշտ է կենսագործել յելներով նախ՝ այն հանգամանքից, որ մինչ այսոր անդմինիստրատիվ-տեխնիկական պերսոնալին պատկանող աշխատողները վոչ բոլոր ձեռնարկներում են մասնակցում արտադրական խորհրդակցությունների աշխատանքներին և յերկրորդ՝ որ նրանց ներկայացուցչի մասնակցությունը չափազանց կարևոր նշանակություն կունենա նաև խորհրդակցություններում բանվորների կողմից առաջադրված հարցերի և առաջադրությունների վերաբերյալ բացատրություններ տալու տեսակետից։ Այս հանգամանքն ունի այն խոշոր նշանակությունը, որ արագացնում է ինչպես առաջարկությունների ընդունման նույնպես և նրանց կենսագործման ընթացքը։

Արտադրական խորհրդակցությունների աշխա-

տանքների վերակազմակերպումից հետո ևս ձեռնարկությունների ապարատներում զբաղված վարչական աշխատողների և գրասենյակային ամբողջ պերսոնալի համար կազմակերպվում են առանձին տնտեսական խորհրդակցություններ, որոնք ամբողջովին գործում են արտադրական խորհրդակցությունների կանոնադրությունով։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արտադրական ձեռնարկություններում, ցեխերում և ագրեգատներում արտադրական խորհրդակցությունները մասսայական-տնտեսական աշխատանքների շտաբ հանդիսանալով, վերից մինչև վար իրենց աշխատանքներն այնպես պետք է դասավորեն և կազմակերպեն, որպեսզի իրականում նրանք դառնան մարտական կազմակերպություններ, կարողանան ակտիվ ներգործություն ունենալ թե ամբողջ արտադրության և թե արտադրական ամեն մի միավորի յուրաքանչյուր ամսվա առաջադրանքները կատարելու և գերակատարելու գործում։

«Այստեղից և՝ արտադրական խորհրդակցությունների հիմնական և գլխավոր աշխատանքը պետք է լինի ղեկավարել սոց-մրցումը, հարվա-

ծային շարժումը, ամենալայն ոժանդակություն ցույց տալ հարվածային բրիգադաներին, ամրացնելով նրանց աշխատանքների արդյունքները և ծավալելով բոլոր գործարաններում իսկական հարվածայնությունը։

Արտադրական խորհրդակցությունները վոչ միայն պետք է մասնակցեն արդիֆինպլանների իրացման աշխատանքներին, նշելով կոնկրետ ուղիներ, առանձին ցուցանիշների նկատմամբ, տեղի ունեցած ճեղքվածքները վերացնելու ուղղությամբ, այլ և նրանք միաժամանակ պետք է հանդիսանան արդիֆինպլանների մշակման աշխատանքներին մասնակցողները։

Այս աշխատանքները նրանք պետք է կատարեն մասնակցելով ադմինիստրացիայի կողմից մշակվող պրոմֆինպլանների աշխատանքների բոլոր շրջաններում (պրոմֆինպլանների մշակում, վարչա-տեխնիկական խորհրդակցություններում քննության առնելը և այլն)։

Արտադրական խորհրդակցությունների հիմնական աշխատանքներից կարելի է նշել հետևյալ խնդիրները[1].

1) Մասնակցում են առանձին արտադրական շրջանների միավորների (ագրեգատ, բրիգադա և

[1] Կազմված և ըստ արտխորհրդակցությունների կանոնադրության։

այլն), արտադրական առաջադրանքների, ցեխերի և համագործարանային պրոմֆինպլանների մշակման աշխատանքներում։ Մշակում և ներկայացնում են գալիք տարվա կամ այլ ժամանակաշրջանի արտադրական պլանների վերաբերյալ իրենց դիտողությունները։

2) Ղեկավարում են հարվածայնությունը և սոցիալիստական մրցումը, կոնկրետ միջոցներ են ձեռնարկում հարվածայնության և սոց-մրցման ծավալման, կազմակերպում են նոր հարվածային բրիգադաներ, ստուգում ու քննում են հարվածայինների աշխատանքների արդյունքները և ոժանդակում նրանց, նկատված թերությունները վերացնելու։

3) Հսկողություն են սահմանում առանձին արտադրական միավորների պլանային առաջադրանքների, ցեխերի և վողջ գործարանի պրոմֆինպլանների կենսագործման վրա։ Այդ նպատակի համար խմբակային արտադրական խորհրդակցություններում քննության են առնում յուրաքանչյուր տասը որը (մեկ դեկադա) և յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ պլանների կիրառումը, իսկ ցեխային կամ համագործարանային արտադրական խորհրդակցությունները— ամսական մեկ անգամ, ինչպես և յուրաքանչյուր կվարտալի վերջում քննության են առնում արդ-

ֆինպլանների կիրառման արդյունքները։ Այստեղ հիմնականը կայանում է նրանում, որպեսզի հնարավոր լինի ժամանակին և հարկավոր չափով մոբիլիզացիայի յենթարկել վողջ բանվորության կարծիքը, պլանային առանձին առաջադրանքների թերակատարման և տեղի ունեցած տնտեսական ճեղքվածքների վրա ու բանվորների հետ միասին նշել այդ թերությունների վերացման կոնկրետ ուղիները։

4) Քննության են առնում և տալիս են իրենց առաջարկությունները արտադրության առանձին խնդիրների և ձեռնարկության տնտեսավարման մասին.

ա) Պայքար կորուստների դեմ.

բ) Վորակի լավացում.

գ) Ինքնարժեքի իջեցում.

դ) Կապիտալ շինարարություն.

յե) Աշխատանքների ճիշտ կազմակերպման խնդիրները.

զ) Մեքենաների և վողջ գործարանի վերանորոգումը.

է) Աշխատանքային դիսցիպլինայի բարձրացումը.

ը) Հում նյութի մատակարարումը և ապրանքի վաճառքը.

թ) Ներգործարանային միջոցների մոբիլիզացիա.

ժ) Մեքենաների լրիվ բեռնավորում, բանվորական որվա լրիվ ոգտագործում և այլն, և այլն։

5) Մասնակցում են ձեռնարկության ռացիոնալացման աշխատանքներին։

6) Քննության են առնում և ոժանդակում անընդհատ արտադրական շաբաթի և 7-ժամյա բանվորական որվա կենսագործման խնդիրներին, ինչպես նաև քննության են առնում նրանց արդյունքները ու վերացնում նկատած թերությունները։

7) Հսկում և ոժանդակում են միանձնյա ղեկավարության կիրառմանը ձեռնարկության մեջ։

8) Կազմակերպում են բանվորներից առաջարկներ ընդունելու գործը և այլն։

Այս խնդիրներից յուրաքանչյուրի լուծումը, առանձին ձեռնարկություններում, նայած աշխատանքի և ժամանակի պայմաններին, կարող է գործնականում կենսագործվել տարբեր ձևով. հարկավոր է միայն յուրաքանչյուր առանձին դեպքում խնդիրները մինչև արտադրական խորհրդակցություններում քննության առնելը, վաղորոք և հարկավոր չափով նախապատրաստել։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերը մենք ասացինք, վոր արտադրական խորհրդակցությունների աշխատանքների ղեկավա-

ղության թուլությունը պատճառ է հանդիսանում, վորպեսզի վերակառուցվեն այդ աշխատանքները։ Այստեղ հարց է առաջանում, ինչ կարգով պետք է ընթանա այդ վերակառուցումը և ինչպես պետք է ապահովվի հետագայում արտադրական խորհրդակցությունների աշխատանքների ղեկավարությունը, վորոնք են այն նոր ձևերը, աշխատանքի նոր մեթոդները, վորոնք պետք է ապահովեն՝ արտադրական խորհրդակցությունների աշխատանքների աշխուժացումը, բանվորների ամենալայն խավերի ներգրավումը ձեռնարկությունների տնտեսական աշխատանքներին և ղեկավարության ուժեղացման հիմնական ձևերը։

Արտադրական խորհրդակցությունների աշխատանքների ղեկավարման հին ձևերը — հանձնաժողովային ղեկավարությունը — (խոսքը արտադրական հանձնաժողովների մասին է) վաղուց է ինչ դադարել են պիտանի լինել՝ ընդունել ներկայիս խնդիրները, ընթացիկ հարցերը, համակերպվել նոր տեմպերի աշխատանքներին յեվ բանվորական բովանդակ մասսայի հետ շարժվել նոր հարվածային տեմպերով ու գլխավորել հարվածային շարժումը։

Պարզ է, վոր աշխատանքների ներկա տեմպերի պայմաններում, նման հանձնաժողովներն ու

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

նման ղեկավարությունը այլևս առանձին աշխատանք չունին կատարելու։

Արտադրական խորհրդակցությունների աշխատանքների ղեկավարման հին ձևերը հիմնովին անպետքացել են, վորովհետև նրա աշխատանքների ձևը յեղել է հանձնաժողովային, ապա ուրեմն հասկանալի յե, վոր յերկար ժամանակ եր հարկավոր հավաքել հանձնաժողովի անդամներին, համաձայնեցնելու առանձին խնդիրները և այլն, մի գործ, վորը պահանջում է ավելի յերկար ժամանակի վատնում. մինչդեռ արտադրական խորհրդակցությունները, բանվորների արտադրական ձեռներեցությունը պահանջում են շտապ, կոնկրետ և գործնական աշխատանքներ։ Մարտական գործում հարկավոր է մարտական ղեկավարություն. հարկավոր է կենդանի կազմակերպող ուժ—ահա այդ ուժը պետք է հանդիսանան արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչները։

Արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչները պետք է գլխավորեն բոլոր արտադրական խորհրդակցությունները՝— խմբակային կազմակերպիչները, ցեխային պրոֆբյուրոներին կամ ցեխային կոմիտեներին կից ցեխային արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչներ, գործարաններին կից— գործարանային

կազմակերպիչները և այլն։ Հարց է առաջանում, վորոնք են խմբակային արտադրական խորհրդակցությունների կազմակերպությունների անելիքներն ու պարտականությունները։

Հիմնական տարբերությունը կայանում է նրանում, վոր կազմակերպիչները չեն «խորհրդակցում» յերկար ու բարակ, յերբեմն վոչինչ չտվող ժողովներում, վորոնցից տառապում են մեր պրոֆմիությունները, աշխատանքների ներկա ձևերով — աշխատանքի թանդ րոպեներ, ժամեր չեն կորցվում։ Այդ իսկ պատճառով ել խմբակային կազմակերպիչներ պետք է ընտրել գործունյա ու ակտիվ ընկերներից։ Վորպես հիմնական նախապայման, կազմակերպիչները պետք է ընտրվեն իրենց խմբակի հարվածայիններից և խորհրդակցությունների աշխատանքներում ակտիվ մասնակցություն ունեցող բանվորներից։ Արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչները կատարում են խորհրդակցությունների կազմակերպումը, ղեկավարում են նրանց աշխատանքները, նախապատրաստում են խորհրդակցությունների որակարգը, ընդունված առաջարկները հանձնում են ադմինիստրացիային, համաձայնեցնելով վերջինիս հետ նրա կիրառման ժամկետները, հետևում են նրանց կենսագործմանը և այլն։ Ինչպես տեսնում եք, կազմակեր-

պիչները պետք է լինեն չափազանց ակտիվ ընկերներից, վորպեսզի կարողանան ժամանակին և առանց հապաղումների կազմակերպել և ղեկավարել այդ աշխատանքները։

Կազմակերպման և ղեկավարման վողջ աշխատանքները նախապատրաստելու և ժամանակին ավարտելու համար կազմակերպիչը բանվորների արտադրական ակտիվից ստեղծում է (կազմակերպում է) հատուկ ժամանակավոր խմբակներ։ Նման խմբակներ կազմակերպվում են արտադրության աշխատանքների տարբեր բնագավառներին վերաբերվող առանձին խնդիրների համար, ինչպես, որինակ, պայքար կորուստների դեմ, բրակի իջեցումը, վորակի լավացումը, արտադրանքի բարձրացումը և այլն, և այլն։ Այդ խմբակները կազմակերպվում են առանձին խնդիրներ նախապատրաստելու համար և իրենց հանձնարարված աշխատանքները նախապատրաստելուց—ավարտելուց հետո ցրվում են։ Առանձին խնդիրների մշակման այս ձևը լայն հնարավորություն է տալիս այդ աշխատանքներին ներգրավելու առանձին խմբակների՝ ցեխերի, նույնիսկ գործարանի վողջ բանվորներին։ Նույնը պետք է անել նաև արտադրական խորհրդակցությունների որակարդի նախապատրաստման ժամանակ, ստեղծելով առանձին խնդիրների մշակման հա-

մար ժամանակավոր խմբակներ։ Առանձին խնդիրների համար կազմվող ժամանակավոր խմբակները պետք է դառնան արտադրական խորհրդակցությունների աշխատանքների սնական մեթոդներից մեկը։ Եթե արտադրական խորհրդակցությունները փոքր են կամ խնդիրները չափազանց մանր են, անհրաժեշտ է ժամանակավոր խմբակներ կազմակերպելու փոխարեն, այդ խնդիրների մշակումը հանձնել առանձին բանվորների. մի խոսքով, այնպես վարվել, որպեսզի բոլոր խնդիրների մշակման և նախապատրաստման գործնական աշխատանքներին ներգրավվի ձեռնարկության բանվորների խոշորագույն մասը։

Հիմնականում նույն ձևով պետք է աշխատեն նաև ցեխային և համագործարանային արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչները, միայն այն տարբերությամբ, որ վերջինիս իրավունքներն ու պարտականություններն ավելի խոշոր են, քան խմբակային արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչների պարտավորություններն ու իրավունքները։

Ցեխային և համագործարանային արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչները ամբողջ ցեխին կամ գործարանին վերաբերվող խնդիրների նախապատրաստման համար կազմա-

կերպում են բանվորների ժամանակավոր խմբակներ և ղեկավարում խմբակային արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչների աշխատանքները, գումարում են նրանց խորհրդակցությունները և այլն։

Ցեխային արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչներն իրենց աշխատանքների ընթացքում հենվում են խմբակային կազմակերպիչների վրա և նրանց հիմնական ու առաջին գործը պետք է լինի կազմակերպել և ամրացնել խմբակային արտադրական խորհրդակցությունների աշխատանքները։

Ցեխային արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչը գումարում է սկզբնական արտադրական միավորների արտխորհրդակցությունների կազմակերպիչների խորհրդակցություն, իսկ գործարանային՝ ցեխային կազմակերպիչների խորհրդակցությունները, ուղղում են նրանց աշխատանքների ընթացքը, ցուցմունքներ տալիս, ամփոփում նրանց գործունեությունը և այլն։

Հիշելով, որ միութենական մասսայական տնտեսական աշխատանքների հիմքը, նրա առանցքը ձեռնարկության ներսում, կազմում է սկզբնական արտադրական խմբակը, միությունների վողջ կազմակերպությունները իրենց ուշադրու-

թյունը պետք է բևեռեն այդ միավորների ամրացման և խմբակային արտադրական խորհրդակցությունների աշխատանքների ուժեղացմանը։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

Արտադրական խորհրդակցությունների աշխատանքների ուժեղացման գործում խոշոր տեղ ունի նաև նրա աշխատանքների ու արած առաջարկությունների կիրառման հաշվառումը. այն բոլոր միավորներում, որտեղ կազմակերպված է և կարգավորված է հաշվառման գործը, որտեղ բանվորներին պարբերաբար ինֆորմացիա չեն տրվում խորհրդակցություններում ընդունված առաջարկությունների կիրառման մասին, այդտեղ բանվորների մեջ դեպի խորհրդակցության աշխատանքները միշտ հետաքրքրություն է նկատվում։

Խորհրդակցությունների աշխատանքների վերակառուցումից հետո բնականորեն փոփոխման է ենթարկվում նաև արտ. խորհրդակցություններ աշխատանքների կիրառման կարգը և նրա հաշվառման կարգը։ Այս աշխատանքները պետք է տանել այն ձևով, որպեսզի մաքսիմալ չափով դյուրացվի առաջարկությունների ու նրա կիրառման հաշվառման գործը։ Վերակառուցումից հե-

տո, առաջարկությունները ընդունվում են ոչ միայն խորհրդակցություններում, այլ և մեկ խորհրդակցությունից մինչև մյուս խորհրդակցության գումարման ժամանակաշրջանում։ Այս կարգով ստացված բոլոր առաջարկությունները յենթակա չեն վորևիցե արտադրական խորհրդակցության քննության։ Նրանք անմիջապես հանձնվում են ցեխի վարչին՝ ի կատար ածելու։ Այս կարգով ստացված առաջարկների այն մասը, վորի դեմ առարկում է ադմինիստրացիան—ցեխային թե համագործարանային—փոխանցվում է համապատասխան արտադրական խորհրդակցություն, քննության առնելու համար։ Ինչպես խմբակային, նույնպես և ցեխային արտադրական խորհրդակցություններում ընդունված առաջարկների այն մասը, վորը վերաբերվում է տվյալ խմբակին կամ ցեխին, առանց վերադաս ադմինիստրացիային հանձնելու կամ նրանից կիրառման իրավունք ստանալու, հանձնվում է տվյալ խմբակի ադմինիստրացիային՝ անշեղ կիրառելու համար։ Խմբակային կամ ցեխային արտադրական խորհրդակցություններում ընդունված առաջարկների այն մասը, վորը վերաբերվում է մի այլ խմբակի կամ ցեխի, հանձնվում է համապատասխան արտադրական միավորի կամ ցեխի ադմինիստրացիային։

Արտադրական խորհրդակցությունների վորոշումների կիրառման իրավունքների ապակենտրոնացումը, գործարանի դիրեկտորից մինչ ցեխի վարիչը և արտադրական սկզբնական միավորի (խմբակի) ադմինիստրացիան, հրամայական պահանջ և առաջադրում արագացնել կուսակցության դիրեկտիվների անհապաղ կենսագործումը՝ միանձյա ղեկավարության և ցեխերը տնտեսավարության (хозрасчет) փոխանցելու մասին։

Ցեթե մինչ այսոր միանձնյա ղեկավարության կենսագործման ասպարիզում մենք ձեռք ենք բերել մի շարք նվաճումներ, ապա նույնը չենք կարող ասել ցեխերը տնտեսական հաշվառքի փոխանցելու վերաբերյալ։ Այս դրությունը պահանջում է, շտկելով միանձնյա ղեկավարության խնդիրների բնագավառում տեղի ունեցած թերությունները, ավելի հրամայականորեն կենսագործելով Համկկ (բ) Կենտկոմի դիրեկտիվը գործարանային «յեռանկյունու» առանձին մասերի փոխհարաբերությունը, տնտեսական մարմինների, պրոֆեսիոնալ կազմակերպությունների և վողջ բանվորական մասսայի ոժանդակությամբ պետք է ամենաշտապ կարգով կենսագործել վողջ ձեռնարկությունների և նրանց առանձին ցեխերը տնտեսական հաշվառքի փոխանցելու վերաբերյալ տված բոլոր դիրեկտիվների կենսագործումը։

Այս հանգամանքն ունի այն խոշոր նշանակությունը, որ ցեխի վարիչը հնարավորություն է ստանում իր ցեխին վերաբերվող առաջարկությունները կենսագործել ինքը, առանց հատուկ իրավունքի, և բացի այդ, հարկավոր դեպքում կարող է և պետք է առաջարկի իրականացման համար պահանջվող գումարները ծախսել իր ցեխի նախահաշվից, իր անմիջական պատասխանատվությամբ։

Ձեռնարկությունների և ցեխերի տնտեսական հաշվառքի փոխանցելու վերաբերյալ տված դիրեկտիվների կենսագործումն ստանում է այն կարևոր նշանակությունը, որ այս հանգամանքը հրամայական պահանջ է առաջադրում կարգավորելու նաև ձեռնարկության աշխատանքների կազմակերպման կարգը։ Մինչ այսոր մեր ձեռնարկությունների խոշորագույն մասում բացակայում է աշխատանքների գիտական կազմակերպումը, իսկ այս դրությամբ առաջ տանել սոցիալիստական տնտեսության զարգացումը, ճիշտ պլանավորում չտալով ձեռնարկության աշխատանքների պրոցեսների փոխհարաբերությանը, նշանակում է ձեռնարկության աշխատանքների ճիշտ կազմակերպման խնդիրը վորոշ ժամանակաշրջան ևս հետաձգել։

Ցեխերի տնտեսական հաշվառքի փոխանցե-

լու խնդրի հետ միատեղ, պետք է արագացնել նաև տվյալ ձեռնարկության ներսում արտադրական նորմաների գիտական չափավորումը։ Հայաստանի ձեռնարկությունների միայն մի քանիսի մեջ է, որ վերջին տարվա ընթացքում մտցրվել է աշխատանքի գիտական չափավորում։ Այս աշխատանքները պետք է խորացնել պրոֆմիութենական մարմինների ամենալայն ուժանդակությամբ։

Միանձնյա ղեկավարության և ցեխերը տընտեսական հաշվառքի փոխանցելու խնդրի հետ միատեղ, դրվում է նաև ձեռնարկության արդ-ֆինպլանները մինչև ցեխերը, բանվորների առանձին խմբակները և ագրեգատները փոխանցելու խնդիրը։ Այսոր, յերբ մեր առաջ դրված է արտ-խորհրդակցությունների աշխատանքների վերակառուցումը, ամենաշտապ կարգով պետք է կազմել նաև ըստ առանձին արտադրական միավորների, հարվածային խմբակների և առանձին բանվորների ամսական պրոմֆինպլանները։ Այս վերջինն անհրաժեշտ է, վորովհետև նրա վրա յե, վոր պիտի կառուցեն իրենց աշխատանքները խմբակային և ցեխային արտադրական խորհրդակցությունները, այդ արդֆինպլաններն են, վոր պետք է հիմք ընդունեն, համեմատեն նրա հետ կատարողականը և միջոցներ ձեռք առնեն

կատարելու և գերակատարելու այդ, ինչպես վորակային նույնպես և քանակային ցուցանիշների նկատմամբ։

Ստացված առաջարկների, ինչպես նաև այդ առաջարկների կիրառումից ստացված տնտեսական եֆեկտի հաշվառումը պարտադիր կարգով վարում է ադմինիստրացիան։ Արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչների, ինչպես նաև գործարկոմների պարտավորությունն է հետևել և հսկել, վորպեսզի սահմանված կարգով և ճիշտ տարվի այդ հաշվառումը։

Ադմինիստրացիային հանձնվող բոլոր առաջարկների համար պետք է սահմանվի կիրառման ժամկետներ. այդ ժամկետները սահմանվում են վերջինիս հետ, համաձայնության կարգով։

Արտադրական խորհրդակցությունների գործունեության մասին բանվորական ժողովներում պետք է պարբերաբար տալ հատուկ զեկուցումներ, մանրամասնորեն կանգ առնելով խորհրդակցություններում ընդունված առաջարկների, նրանց կիրառման, ստացած տնտեսումների վրա և այլն։ Արտադրական խորհրդակցությունների առաջարկների կիրառման ընթացքը և ստացած տնտեսումների չափը պարզելու համար արտադրական խորհրդակցությունների, հա-

մասնատասխան արտադրական միավորների և ցեխերի բանվորներից կազմում են վերահսկիչ բրիգադաներ, կամ ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներ։ Այս վերջինն աշխատում է ղեկավարվելով ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների կանոնադրության հիման վրա։

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արտադրական խորհրդակցությունների աշխատանքների վերակառուցման գործում, նրա աշխատանքների թափի ուժեղացման խնդրում, խոշոր անելիք ունի նաև բանվորների արտադրական ձեռներեցության խրախուսումը. այս վերջինը, ի թիվս մյուս բոլոր հիմնական մոմենտների, որոնց պատճառով բանվորներն ակտիվորեն մասնակցում են արտադրական խորհրդակցությունների խնդիրների լուծման գործին, ավելացնում է նաև բանվորների անհատական շահագրգռությունը։

4—5-րդ տարին է, ինչ արհմիութենական կազմակերպությունները անընդհատ վորոշումներ են կայացնում արտադրական խորհրդակցությունների աշխատանքներում ակտիվ մասնակցություն ընդունող բանվորներին պարգևատրելու մասին, մինչդեռ իրականության մեջ

այսոր մենք ունենք բազմաթիվ, բազմահազար վորոշումներ — և այդ բոլորի դիմաց աննշան աշխատանք՝ պարգևատրումների գործը հարկավոր բարձրության վրա դնելու համար։

Ընդունելով, վոր բանվորների արտադրական ձեռներեցության խրախուսման գործում խոշոր դեր ե խաղում ձեռնարկությունների, ցեխերի և առանձին բանվորների պարգևատրումը, պրոֆմիութենական և տնտեսական կազմակերպություններն աշխատանքների վրա պետք ե վոր դարձնեն ամենալուրջ ուշադրություն։

Մինչև 1929 թ. վերջերը Հայաստանում հատու-կենտ ձեռնարկություններ ելին, վորոնք ունելին պարգևատրման ֆոնդեր. միութենական կառավարության համապատասխան դեկրետից հետո այդ ֆոնդերն ստեղծվեցին համարյա թե բոլոր ձեռնարկություններում։ Սակայն դրանով աշխատանքներն ավարտած համարել յերբեք չի կարելի, քանի վոր դա միայն գործի սկիզբն եր և հարկավոր եր անցնել անմիջական պարգևատրումների և ֆոնդերի լրացմանը։ Ահա այստեղ ե, վոր կրկին պետք ե հիշել աշխատանքի տեմպերի թուլությունը. մի ամբողջ կիսամյակի ընթացքում (1929 թ. հոկտեմբերից առ 1930 թ. ապրիլը) Ժողտնտխորհի յենթակա ձեռնարկություններում ընդամենը յեղել ե 3 պարգևատր-

րում, ընդհանուր գումարով 560 ռուբ. 34 կ.։ Պարգևատրումների չափը տատանվել է 25 ռ. մինչ 500 ռուբ.։

Պարգևատրումներ տրվել են միմիայն ստացված առաջարկությունների համար, այնինչ միութենական կառավարության հրատարակած դեկրետի համաձայն, այդ ֆոնդերը պետք է ծախսվեին նաև տեխնիկական կոնսուլտացիայի կազմակերպման, գծագրությունների, մոդելներ պատրաստելու վրա և այլն։

Առ 1930 թ. ապրիլի մեկը ՀՍԽՀ ժողտնտխորհին յենթակա ձեռնարկներին կից սահմանված ֆոնդերն ըստ առանձին ձեռնարկությունների տալիս են հետևյալ պատկերը՝

1) Անի պեմզա 900 ռ. կիսամյակի ընթացք. չի ծախսվել վոչ մի կոպեկ.
2) Մեխ. գործար. 200 ռ. » »
3) Հայտնատրեստ 605 ռ. » »
4) Արարատ sr. 5470 ռ. ծախսվել է 500 ռ.
5) Ծխախոտի գործ. 200 ռ. կիսամյակի ընթացք. չի ծախսվել վոչ մի կոպեկ.
6) Կաշվարդ 600 ռ. » »
7) Հայպոլիգրաֆ 96ռ. 20կ. ծախսել է 25ռ.
8) Կարի գործարան 200 ռ. » 35 ռ. 34 կ.
9) Լեռնարդ-sr. 588 ռ. 25 կ. չի ծախսվել.
10) Հայպեստին 2000 ռ. » »

11) Հայկիին 1000 ռ. » »
12) Տեխտիլշեն 2255 ռ. 84 կ. » »
Ընդամենը 13105 ռ. 52 կ., ծախսվել է 560 ռ. 34 կ.։ Մնում է առ մեկն ապրիլի 12544 ռ. 98 կ.

Հիշյալ բոլոր ֆոնդերը սահմանվել են միանվագ հատկացումների կարգով և հետագայում վորևիցե լրացում առանձին ձեռնարկությունների ֆոնդերի նկատմամբ տեղի չի ունեցել։ Անհրաժեշտ է ամենամոտ ապագայում, յուրաքանչյուր ձեռնարկության ներսում, հաշվի առնել արտադրական խորհրդակցություններում բանվորների արած առաջարկությունների կիրառման հետևանքով ստացած տնտեսումների չափը և ըստ այնմ, հիմք ընդունելով միութենական կառավարության դեկրետի համապատասխան մասը, առանձին ձեռնարկությունների խմբերի միջև կատարել հասանելիք հատկացումները։

Այս աշխատանքները ձգձգելու դեպքում առանձին ձեռնարկությունների ֆոնդերը կարող են սպառվել, վորովհետև այդպիսիները չեն լրացվել (կիսամյակի ընթացքում), վորը և պատճառ կհանդիսանա վորոշ ժամանակով դադարեցնելու պարգևատրումների գործը. մի հանգամանք, վորը յերբեք չի կարող նպաստել արտադրական խորհրդակցությունների աշխատանքների

ծավալմանը և նրա աշխատանքների արագ վերակառուցմանը։

Բանվորների, ինչպես նաև առանձին ցեխերի կամ ձեռնարկություններին պարգևատրումները պետք է կատարել ոչ միայն խոշոր տնտեսումներ տվող առաջարկություններին համար, այլև արտադրական աշխատանքներում ակտիվ մասնակցություն ցուցաբերող և գործնական առաջարկներ անող բանվորներին, անկախ այն հանգամանքից, թե տվյալ առաջարկը կիրառվում է, թե ոչ։

Պարգևատրումների գործը, արտադրական աշխատանքների վերակառուցումից հետո, պետք է այնպես դասավորել, որպեսզի պարգևատրումներ տրվեն ոչ միայն համագործարանային մասշտաբով, այլ այդպիսին պրակտիկայում կիրառվի նաև արտադրական ստորին ողակներում։

Բացի առանձին ցեխերի և գործարանի մասշտաբով տեղի ունեցած պարգևատրումների բանվորների տվյալ խմբակը, ինչպես նաև առանձին բանվորները, անկախ գործարանում ստացած պարգևատրումից և նրա չափից, կարող են նաև կրկին անգամ պարգևատրվել առանձին տրեստների կողմից, այս կամ այն ձեռնարկության արտադրական խորհրդակցություններում

ունեցած գործնական մասնակցության և առաջարկած գնահատելի առաջարկությունների համար։

Միութենական բոլոր կազմակերպություններն անհապաղ պետք է ձեռնարկեն տրեստներին կից, ինչպես նաև տնտեսական այլ միավորներին կից պարգևատրումների հատուկ ֆոնդեր սահմանելու աշխատանքներին։ Այդ ֆոնդերի սահմանման կարգի մասին, միութենական կառավարության կողմից արտխորհրդակցությունների աշխատանքների մասին անցյալ տարվա սեպտեմբեր ամսին հրատարակած դեկրետի, ինչպես նաև այդ դեկրետի կենսագործման համար հրատարակած հրահանգի մեջ կան մանրամասն ցուցմունքներ, ապահովելու համար տրեստների գծով պարգևատրումներ տալու գործը, անհրաժեշտ է ամենակարճ ժամանակամիջոցում, ինչպես ծողտնտխորհին, նույնպես և առանձին տրեստներին կից ստեղծել պարգևատրման հատուկ ֆոնդեր։

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՄԿԽ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Սոցիալիստական շինարարության արագ տեմպերի համար տարվող պայքարի և բանվոր դասակարգի աշխատանքային վերելքի պայմաններում (սոցմրցում, հարվածայնություն և այլն) արտադրական խորհրդակցությունները հատուկ դեր ունեն կատարելու. նրանք պետք է դյուսավորեն և վերջնականապես կազմակերպեն այդ շարժումը, դառնան մասսաների տնտեսական ղեկավարության և սոց-շինարարության նոր կադրեր դաստիարակող դպրոցներ. մինչդեռ արտադրական խորհրդակցությունների աշխատանքներն զգալի չափով հետ են մնում պրոլետարիատի արտադրական ակտիվության վերելքից։

Արտադրական խորհրդակցությունները և հանձնաժողովները մինչև այժմ չեն կարողացել ընդգրկել՝

ա) սոցմրցման և հարվածայնության ղեկավարության գործը,

բ) չեն ապահովել բանվորների մասնակցությունը արդիֆինպլանները մշակելու և նրանց ցեխերին ու ագրեգատներին հասցնելու գործը,

գ) չեն կարողացել բանվորների ուշադրությունը ժամանակին կենտրոնացնել 5-ամյակի 2-րդ տարվա կոնկրետ խնդիրների, ինչպես և տնտեսական ճեղքվածքների դեմ պայքարելու գործի վրա,

դ) արտադրական խորհրդակցությունների աշխատանքների ներկա մեթոդները և կազմակերպչական ձևերը չեն համապատասխանում վերակառուցման ներկա շրջանում բանվոր դասակարգի առաջ ծառացած, առանձնապես 5-ամյակի 2-րդ տարվա նոր խնդիրների հաջող լուծման գործին։

2. Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման շրջանը, բարձրացնելով արտադրական խորհրդակցությունների դերն ու պատասխանատվությունը, հրամայական պահանջ է դնում նրանց առաջ սոցիալիստական մրցման և հարվածայնության մեթոդներով կազմակերպել բանվորական մասսաները, պայքարելու արտադրական-տնտեսական պլանների կատարման և գերակատարման, կազմակերպելու բանվորների

ձեռնարկությունն աշխատանքի և արտադրական պրոցեսների ռացիոնալացման գործի համար։ Միաժամանակ մեր տնտեսության ներկա շրջանը պահանջում է արմատապես վերակառուցելու արտադրական խորհրդակցությունների կառուցվածքը և նրանց աշխատանքների մեթոդները, դարձնելով այն մարտական կազմակերպություններ, որոնք ակտիվ ներգործություն պետք է ունենան ինչպես ձեռնարկության, նույնպես և առանձին արտադրական մասերի վողջ աշխատանքների վրա։

3. Ցնցելով վերոհիշյալից, ՀամԿՄ-ի նախագահությունն առաջարկում է՝

ա) Կազմակերպել արտադրական խորհրդակցություններ ցեխերի ստորին արտադրական ողակներում և բանվորական խմբակներում՝ ըստ ագրեգատների, կոմպլեկտների, բրիգադաների և այլն։ Շարունակելով սմենային, ցեխային և համագործարանային արտադրական խորհրդակցություններ հրավիրելու պրակտիկան, հիմնական ողակը համարել խմբակային արտադրական խորհրդակցությունն արտադրական ստորին միավորում. արտադրական խմբակային խորհրդակցություններ կազմակերպել առաջին հերթին արտադրության կարևորագույն բնագավառներում։

բ) Գործարկոմներին և ցեխային կոմիտեներին կից գործող արտադրական հանձնաժողովները լուծարքի չենթարկել, նրանց փոխարեն գործարանային և ցեխային արտադրական խորհրդակցությունների աշխատանքները ղեկավարելու համար առաջադրել այդ խորհրդակցությունների կազմակերպիչներ։

գ) Սոցմրցման ակտիվ մասնակցող և հարվածային բանվորներից ցեխերում կազմակերպել արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչների լայն ցանց այն հաշվով, որպեսզի ամեն մի ստորին արտադրական բանվորական խմբակում (ագրեգատ, կոմպլեկտ և այլն) տվյալ խմբակի բանվորներից լինի արտադրական խորհրդակցության մեջ կազմակերպիչ-ղեկավար։ Արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչների աշխատանքները ղեկավարելու համար գործարկոմին կից գումարել նրանց պարբերական խորհրդակցություններ։

Առաջարկել միութենական կազմակերպություններին արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչներ պատրաստելու համար ձեռնարկություններում բացել կարճատև (մի ամսյա) դասընթացքներ-սեմինարիաներ։ Հետագայում ևս արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչների նորոգված (ընտրու-

թյուններից հետո) փոփոխված կազմի համար պարբերաբար կազմակերպել նման սեմինարիաներ։

Միությունների նահանգային բաժինները և արհմիությունների խորհուրդները պարտավոր են ապահովելու արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչների դասընթացքները հարկավոր և անհրաժեշտ ուժերով և միջոցներով։

դ) Անցնել արտադրական խորհրդակցությունների աշխատանքների շարժական մեթոդին։ Ձեռնարկության աշխատանքների «նեղ» տեղեր հանդիսացող արտադրական առանձին խնդիրների շուրջը արտադրական խորհրդակցություններին կից կազմակերպել ակտիվի ժամանակավոր խմբակներ (պայքար կորուստների և բրակի դեմ, ներդրծարանային փոխադրության կազմակերպումը, ռացիոնալիզացիայի խմբակների և բջիջների կազմակերպումը և այլն), այդ խմբակների աշխատանքների մեջ ներգրավել առաջին հերթին սոցմրցմանն ակտիվ մասնակցող և հարվածային բանվորներից։ Մի քանի արտադրական սկզբնական խմբակների բանվորների համար, որոնք իրենց աշխատանքի պրոցեսներով ներտորեն կապված են միմյանց հետ, գործադրել կաստային (խմբակային) արտադրական խորհրդակցությունների գումարումը, վարտեղ և քըն-

նության առնել իրենց աշխատանքների պրոցեսների կապից բղխող առանձին խնդիրները։ Ավելի լայն գործադրել արտադրական կանչերի (перекличка) մեթոդը, կիրառելով այդ ոչ միայն առանձին ձեռնարկություններում, այլ և ձեռնարկության ներսում առանձին ցեխերի, ինչպես նաև առանձին ցեխերի առանձին խմբակային արտադրական խորհրդակցությունների միջև։

յե) Ել ավելի ծավալել ըստ տրեստների արտադրական կոնֆերանսներ հրավիրելու պրակտիկան։

Արտադրական կոնֆերանսները պետք է ամփոփեն խմբակային արտադրական խորհրդակցությունների փորձը, տարածեն այդ բանվորական լայն մասսաների մեջ, իր ժամանակին մոբիլիզացիայի յենթարկեն բանվորների ուշադրությունը ճեղքվածքների վերացման, տնտեսական ծրագրի իրագործման վրա և ուղղություն տան խմբակային արտադրական խորհրդակցությունների աշխատանքներին։

4. Արտադրական խորհրդակցությունների հիմնական և գլխավոր աշխատանքը պետք է լինի՝ ղեկավարել սոցմրցման և հարվածայնության շարժումը, ամենալայն ոգնություն ցույց տալ հարվածային բրիգադներին, նրանց աշխատանքի արդյունքներն ամրացնելու և իրական հարվա-

ծայնություն առաջացնելու ձեռնարկության ներսում։

Արտադրական խորհրդակցությունները ձեռնարկություններում պետք է դառնան ակտիվ գործողության մարմիններ, նրանք պետք է վոչ միայն առաջարկներ մտցնեն, այլ և անմիջապես, գործնականորեն իրագործեն այն, իրենց արտադրության բնագավառում, տալով հարվածային բրիգադներին կոնկրետ հանձնարարություններ, վորոնք բղխում են նրանց ամենորյա արտադրական աշխատանքներից և ստուգելով պարբերաբար այդ հանձնարարությունների կիրառումը։ Արտադրական խորհրդակցությունները պետք է վոչ միայն քննարկեն, այլ և մասնակցեն արդիֆիկացիաներին, ինչպես նաև ձեռնարկության ռացիոնալացման ծրագրի մշակման և կիրառման աշխատանքներին. նրանք պետք է մշակեն ու առաջադրեն տնտեսական մարմիններին իրենց կոնկրետ առաջարկները արտադրական ծրագրի լայնացման, ինքնարժեքի իջեցման և բրակի վերաբերյալ, ինչպես նաև յուրաքանչյուր արտադրական-սկզբնական միավորի՝ շրջանի նկատմամբ մշակել ռացիոնալիզատորական առաջարկներ։

Գործարկումները և վերադաս պրոֆկազմակերպությունները արտադրական խորհրդակցու-

թյունների աշխատանքների մասին Ժողկոմխորհի դեկրետի հիման վրա պետք է ստեղծեն (ապահովեն) այնպիսի դրություն, որպեսզի արտադրական խորհրդակցությունների առաջարկություններն անպայմանորեն հաշվի առնվեն ադմինիստրացիայի կողմից արդիֆինպլանը, ինչպես նաև առանձին ցեխերի և ընդհանրապես վողջ ձեռնարկության ռացիոնալացման ծրագիրը կազմելիս, ըստ որում արդիֆինպլաններում մըտցրվող հետագա փոփոխությունները անպայմանորեն քննության պետք է առնվեն արտադրական խորհրդակցություններում։

Արտադրական խորհրդակցությունները պետք է կենսագործեն ամենորյա ղեկավարությունը հարվածային բրիգադների աշխատանքների վրա, դյխավորեն նրանց ձեռներեցությունը և ուղղեն այդ դեպի ռացիոնալացման կոնկրետ միջոցներ գտնելու խնդիրները, հատկապես արտադրության վոչ բավարար բնագավառներում, տալ նրանց առաջադրություններ, կազմակերպել մրցություններ հարվածայինների միջև ավելի լավ առաջարկություններ անելու աշխատանքի կոնկրետ բնագավառներում ռացիոնալիզացիայի անցկացման գործի համար և այլն։

Արտադրական խորհրդակցությունների մոտակա ժամանակաշրջանի կենտրոնական խնդիր-

ները պետք է հանդիսանան միջգործարանային պլանավորման աշխատանքների լավացումը և ձեռնարկության տնտեսական անպլանայնության լիկվիդացիան։

5. Արտադրական խորհրդակցությունների առաջ դրված խնդիրների կենսագործումը ներկայումս դժվարանում է արտադրական տեխնիկական պրոցեսների հետ բանվորական լայն մասսայի վոչ բավարար ծանոթ լինելուց։ Ճարտարապետ-տեխնիկական աշխատողները, վորպես պրոֆմիությունի անդամներ և վորակյալ բանվորներ արտադրական խորհրդակցություններում, պետք է ոգնեն վողջ բանվորական մասսային ծանոթանալու և տիրապետելու արտադրական տեխնիկան։ Պրոֆմիությունները պետք է մոբիլիզացիայի յենթարկեն ճարտարապետ-տեխնիկական վողջ ուժերը և վորակյալ բանվորներին՝ արտադրական խորհրդակցություններում գործնական աշխատանքներ տանելու համար։

6. ՀամԿՍ-ի նախագահությունն անհրաժեշտ է համարում ԺողտնտԽորհի գծով՝

ա) ապակենտրոնացնել արտադրական խորհրդակցությունների առաջարկների կիրառումն այն հաշվով, վորպեսզի առաջարկների մեծ մասն իր լուծումն ստանա տեղում, իր ցեխում։ ԺողտնտԽորհի առաջ խնդիր հարուցել ձեռնար-

կության ստորին վարչա-տեխնիկական կազմի (վարպետների, նրանց ոգնականների, ավագ բրիգադիրների) իրավունքների լայնացման այն հաշվով, որ նրանց իրավունք տրվի առանց ցեխի վարչի թույլտվության կիրառելու բոլոր առաջարկները, որոնք չեն ացնում նրանց աշխատանքի մասշտաբի (շրջանի) սահմաններից։

7. Միութենական կազմակերպությունները տնտեսական մարմինների հետ համահավասար կերպով պետք է պատասխանատվություն կրեն բանվորների առաջարկությունները չկիրառելու համար, իրենց աշխատանքների ընթացքում նրանք պետք է խիստ կերպով պայքարեն ադմինիստրացիայի կողմից ընդունված բոլոր առաջարկների կիրառման համար։ Նահանգային պրոֆմիութենական կազմակերպությունները պետք է սահմանեն առաջարկությունների կիրառման գործի սիստեմատիկ կոնտրոլ, անշեղ կիրառելով Ժողկոմխորհի դեկրետը արտադրական խորհրդակցությունների առաջարկությունների կիրառման գործում վալակիտա ստեղծողներին պատասխանատվության յենթարկելու համար։

Արտադրական խորհրդակցություններին կից պարբերաբար կազմակերպել հարվածայինների խմբակներ, ստուգելու ադմինիստրացիայի կողմից առաջարկությունների կիրառման ատիճանը և նրանց ընթացքը։

Մոտ ապագայում Բանդյուղտեսչության հետ միասին մի շարք կարևորագույն ձեռնարկություններում կազմակերպել ստուգում, պարզելու արտադրական խորհրդակցությունների մասին ծողկոմխորհի դեկրետի կիրառման աստիճանը տնտեսական մարմինների կողմից։

8. Արտադրական խորհրդակցությունների աշխատանքների հաջողությունը զգալի չափով կախում ունի միանձնյա ղեկավարության սիստեմի և ձեռնարկությունները տնտեսության փոխանցման խնդիրների անհապաղ կիրառումից։

Արտադրական խորհրդակցությունները պետք է ստեղծեն բոլոր պայմանները ու նախադրյալները ձեռնարկությունների ցեխերում միանձնյա ղեկավարությունը գործնականորեն անցկացնելու համար և պարզեն, թե ինչպես է իրագործվում այն։ Նրանք պետք է կազմակերպեն հարվածայիններից վերահսկող—ստուգիչ բրիգադաները, վորոնք գտնվելով գործարանի վարչության տրամադրության տակ, պետք է կատարեն վարչա-տնտեսական գծով տրված հրամանների կիրառման ստուգման աշխատանքը և ադմինիստրացիայի կողմից իրենց իրավունքների և պարտականությունների լրիվ ոգտագործումը։

9. Առաջարկել պրոֆկազմակերպություններին ավելի լայն կերպով ոգտագործել իրենց իրավունքները ժամանակավոր վերահսկիչ հանձնա-

ժողովներ կազմակերպելու խնդրում։ Արտադրական խորհրդակցությունները բոլոր անհրաժեշտ դեպքերում ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներ պիտի կազմակերպեն ոչ միայն համագործարանային մասշտաբով, այլ և ցեխային, ուսումնասիրելու համար այն բոլոր կարևոր խնդիրները, որոնք վերաբերում են արտադրության և նրա կազմակերպմանը։ Պետք է կազմակերպել բանվորական բրիգադներ ըստ ցեխերի և առանձին արտադրական ընագավառների, որոնք պետք է ոգնեն ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներին ու կազմակերպեն բանվորների լայն մասնակցությունը ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների աշխատանքների արդյունքները և նրանց առաջարկները քննելու խնդիրներում։

10. Ընդգծելով բանվորների պարգևատրման գործի և պարգևատրման ֆոնդի ոչ բավարար ոգտագործման աշխատանքների աններելի թուլությունը, գտնել անհրաժեշտ ապակենտրոնացնել պարգևատրման կարգն այն հաշվով, որ բանվորների պարգևատրման խնդիրը (արած առաջարկությունների համար) լուծվի անմիջականորեն ցեխերում։ Գործարանային գյուտարարությանն ոժանդակելու վերաբերյալ գոյություն ունեցող կանոնադրության հիման վրա գործարանային պարգևատրման ոժանդակող հանձնա-

ժողովին ուղնելու համար ցեխերում կազմակերպել հատուկ ցեխային հանձնաժողովներ։ Պրոֆմիութենական կազմակերպությունները պետք է խստիվ հետևեն բանվորների ճիշտ և լրիվ պարգևատրման, պայքարեն անճշտությունների դեմ և պատասխանատվության յերթարկեն այն անձանց, վորոնք կխախտեն պարգևատրման համար սահմանված կարգը, ինչպես նաև պարգևատրման չափը։

11. Գործարանների տեխնիկական կադրերի պակասությունը դնում է արտադրական խորհրդակցությունների առաջ բանվորների պատրաստման և նրանց վարչա-տեխնիկական աշխատանքների համար առաջ քաշելու խնդիրը արտադրական ակտիվ և այն հարվածային բանվորներից, վորոնք արտադրական խորհրդակցություններում իրենց ցուցահանած աշխատանքների ընթացքում հայտնաբերել են վարչա-տեխնիկական ընդունակություններ։

ՀԱՄԽ-ի նախագահությունը ժողտնտխորհի առաջ խնդիր է հարուցում գործարաններում անպայմանորեն դասընթացքներ բացելու, արտադրական խորհդակցությունների ակտիվից և հարվածայիններից միջին և ստորին վարչա-տեխնիկական պերսոնալ պատրաստելու համար։

Առաջարկել արհմիությունների խորհուրդներին ստուգելու տնտեսական մարմինների հատկացումների և արտադրական խորհրդակցու-

թյունների առաջարկների կիրառումից ստացած 10%-ին տնտեսումներից ստացվող գումարը բանվորների արտադրական տեխնիկական լուսավորության համար ոգտագործելու գործի դրվածքը։

12. Վերակառուցել խմբակային սկզբունքով տնտեսական հանձնաժողովների աշխատանքները գործարանային գրասենյակներում, դնել նրանց առաջ կոնկրետ խնդիրներ արտադրական հաշվառման կատարելագործումը, հաշվառման ժամկետների արագացումը, ավելի շուտ հայտնաբերելու և բանվորների ուշադրությունը կենտրոնացնելու արտադրության աշխատանքի առանձին ճյուղերի վոչ բավարար դրության խնդիրների շուրջը։

Ծավալել ռացիոնալացման շարժումը ձեռնարկություններում բանվորական հաշվային աշխատողների բջիջներ կազմակերպելու միջոցով։ Առաջարկել Խորհրդի կենտվարչությանը հաշվային աշխատողների Ասոցիացիայի միջոցով հասարակական աշխատանքների կարգով կազմակերպել մասնագետների մասնակցությունը ձեռնարկությունների հաշվային աշխատողների աշխատանքներին, ձեռնարկության հաշվային գործի արտադրական ռացիոնալացում առաջ տանելու համար։

13. Այս վորոշման հիման վրա հանձնարարել արտադրական և աշխատավարձի սեկտորներին Ժողտնտխորհի հետ միասին մշակել և հրապարակել արտադրական խորհրդակցությունների նոր կանոնադրությունը։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0039682

(104)

Сост. Вюго-Сарян

669

А I / 4555

О ПЕРЕСТРОЙКЕ РАБОТ ПРОИЗВОДСТВЕННЫХ СОВЕЩАНИЙ

Госиздат ССР Армении
Эривань, 1930 г.

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ. ($1^1/_2$ Ռ.) սահ.